

"22" մարտի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2005 թվականի N 289-Ն

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆՎՏԱՆԳ  
ԱՊԱԿԻՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Ստանդարտացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 876-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականի ընթացքում մշակման ենթակա առաջնային տեխնիկական կանոնակարգերի ցանկի 16-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող անվտանգ ապակիների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ

Հավելված  
ՀՀ կառավարության  
2005 թվականի փետրվարի 24-ի  
N 289-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՎԵՐԳԵՏՆՅԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆՎՏԱՆԳ  
ԱՊԱԿԻՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող անվտանգ ապակիների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 7007 11 100, 7007 21 200 ծածկագրերին համապատասխան անվտանգ բազմաշերտ ապակիների և միաձառ ապակիների (այսուհետ՝ ապակիներ) վրա, որոնք օգտագործվում են բոլոր մակրոկլիմայական շրջաններում շահագործվող վերգետնյա տրանսպորտային միջոցների, տրակտորների, գյուղատնտեսական և բեռնամբարձիչ մեքենաների համար:

(1-ին կետը փոփ. 23.11.07 թվականից՝ 26.04.07 թիվ 505-Ն որոշում)

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են ապակիներին ներկայացվող տեխնիկական, ինչպես նաև դրանց մակնշմանը, փաթեթավորմանը ներկայացվող պահանջները և համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում մոտոցիկլետների եւ ավտոսահնակների համար օգտագործվող ապակիների վրա:

4. Ապակիները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

## II. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝ վերգետնյա տրանսպորտ՝ տրանսպորտ, որը ներառում է ավտոտրանսպորտի բոլոր տեսակները եւ գնացքները, այդ թվում՝ մետրոյի գնացքների վագոնները,

ավտոտրանսպորտ՝ արագընթաց տրանսպորտ, որը ներառում է մարդատար, բեռնատար ու բազմանպատակային մեքենաները, ավտոբուսները եւ տրոլեյբուսները,

թեթև մարդատար մեքենա՝ փոխադրամիջոց, որում նախատեսված են, վարորդի տեղից բացի, ութից ոչ ավելի տեղեր՝ ուղևորների փոխադրման համար,

բազմաշերտ ապակի՝ արտադրատեսակ՝ կազմված 2 եւ ավելի շերտից, որոնք միմյանց միացված են մեկ կամ մի քանի միջանկյալ պլաստմասսայե պատվածքի միջնաշերտերով, միաձ ապակի՝ միաշերտ ապակի՝ ենթարկված հատուկ ջերմամշակման՝ մեխանիկական հատկությունների բարձրացման եւ հարվածի դեպքում փշրումն ապահովելու համար,

կորածե ապակի՝ ապակի, որը կորացված է ոչ պակաս, քան մեկ ուղղությամբ,

հողմապակի՝ ապակի, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցների առաջնային որմնաբացվածքի ապակեպատման համար,

հողմապակու սեգմենտի բարձրություն՝ կորածե ապակու ներքին մակերեւույթից մինչև ապակու եզրով անցնող հարթության միջև առավելագույն հեռավորությունը,

այլ ապակի՝ ապակի, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցների կողային եւ հետին որմնաբացվածքների ապակեպատման համար:

## III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապակիների իրացումն առանց համապատասխանության հավաստման:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա եւ շրջանառության մեջ գտնվող ապակիները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ

գրանցված համապատասխանության հայտարարագրով:

## IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

8. Ապակիները պետք է արտադրվեն սույն տեխնիկական կանոնակարգով եւ ստանդարտացման նորմատիվ, ինչպես նաեւ ապակիների տեխնիկական (կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական) փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան:

9. Ապակիների կոնստրուկտորական փաստաթղթերում պետք է տրված լինեն հետևյալ տվյալները՝

ա) պայմանական նշագիրը՝ սահմանված որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով,

բ) գույնը,

գ) չափերը՝ սահմանային շեղումներով,

դ) կորածե ապակիների համար ձեւանմուշի եւ լայնական կորության նկատմամբ

թույլատրելի անհարումը,

ե) հարթ ամրացված ապակիների համար հարթայնության շեղումները՝ միլիմետրերով,

զ) ապակու եզրից այն հեռավորությունը, որի վրա թույլատրվում է սեղմակների եւ ցցաձողերի հետքերը եւ դրանց չափը,

է) բաց եւ սահող կողերը,

ը) իջեցվող եւ շարժական ապակիների կողերի մշակման եղանակը,

թ) հողմապակու տեղադրման անկյունը, որը գտնվում է տրանսպորտային միջոցի լայնական առանցքով անցնող ուղղահայաց հարթությունում եւ ձեւավորվում է հողմապակու վերին ու ստորին եզրերով անցնող ուղղահայաց եւ ուղիղ գծով,

ժ) հողմապակիների օպտիկական որակի ստուգման համար A, B եւ 1-ին գոտիների դիրքը եւ չափերը: Գոտիները նշագրվում են տրանսպորտային միջոցներ արտադրող կազմակերպությունների կողմից տրված պահանջներին համապատասխան,

Ճա) հողմապակիների վրա մթնեցման շերտերի առկայության դեպքում դրանց չափերը եւ բնութագրերը,

Ճբ) շրջանակով եւ կիպարարով փակվող շերտերի լայնությունը,

Ճգ) մակնշման տեղը,

Ճդ) 70%-ից պակաս լուսաթափանցելիությամբ ապակիների համար լուսաթափանցման չափի եւ տեսակի մակնշումը:

10. Ապակիների չափերը եւ դրանց սահմանային շեղումները պետք է համապատասխանեն կոնստրուկտորական փաստաթղթերով սահմանված պահանջներին ու չպետք է գերազանցեն 1-ին աղյուսակով եւ սույն տեխնիկական կանոնակարգի 11-րդ կետով սահմանված նորմերը:

Աղյուսակ 1

Ապակու տեսակը	Մակերեսը, մ <sup>2</sup> , ոչ ավելի Հաստությունը, մմ		
Բազմաշերտ՝ հարթ	2	4-7,5	
Բազմաշերտ՝ կոր	2,5	5-7,5	
Միաձառ ապակի՝ հարթ	2,3		3-6
Միաձառ ապակի՝ կոր	1,5		

11. Հարթ ապակիների չափերի սահմանային շեղումները չպետք է լինեն +/- 2,0 մմ-ից ավելի:

Ապակիների հաստության սահմանային շեղումները չպետք է գերազանցեն՝

ա) բազմաշերտ ապակիներինը՝ +/- 0,4 մմ,

բ) ամրացված ապակիներինը՝ +/- 0,3 մմ:

Միաձառ ապակիների հաստության շեղումները չպետք է գերազանցեն +/- 0,2 մմ-ն:

12. Էլեկտրագնացքների եւ ներքին այրման շարժիչներով գնացքների ուղեւորատար վագոնների ապակեպատման համար նախատեսված ապակիների չափերը եւ դրանց սահմանային շեղումները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնով սահմանված էլեկտրագնացքների եւ դիզել-գնացքների ուղեւորատար վագոնների ապակիների ստանդարտով սահմանված նորմերին:

13. Հողմապակիները պետք է արտադրված լինեն 0,76 մմ հաստությամբ թաղանթ ունեցող բազմաշերտ ապակուց: Մինչեւ 30 կմ/ժ արագություն զարգացնող

դանդադրնթաց տրանսպորտային միջոցների համար թույլատրվում է միսած ապակուց հողմապակու արտադրումը:

14. Սահմանված ձեւից հարթ ապակիների եւ կորածեւ ապակիների հարթությունների շեղումները պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ եւ կոնստրուկտորական փաստաթղթերով:

15. Ապակիների բաց եւ սահուն կողերը պետք է լինեն հղկված, փակ անշարժները՝ բթացված:

Չի թույլատրվում ապակիների բաց կողերի վրա կոտրվածքներ:

Ապակիների սահող եւ անշարժ փակ կողերի վրա թույլատրելի կոտրվածքների (ջարդվածքների) չափերն ու քանակը պետք է սահմանվեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

16. Ավտոտրանսպորտային միջոցների հողմապակու լուսաթափանցելիությունը պետք է լինի 75%-ից ոչ պակաս, առջեւի դռների ապակիներինը եւ առջեւի կողային ապակիներինը (առկայության դեպքում)՝ 70%-ից ոչ պակաս, այլ ապակիներինը՝ 60%-ից ոչ պակաս:

Ապակեպատված կամ լուսանցքային տանիքի, թեթեւ մարդատար մեքենաների B գոտու եւ այլ տրանսպորտային միջոցների համար 1-ին գոտու մթնեցված շերտերից դուրս գտնվող սահմաններում լուսաթափանցելիությունը չի նորմավորվում: Հողմապակիների գոտիները որոշվում են՝ համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնի:

Ջերմակլանող հողմապակիները չպետք է աղավաղեն սպիտակ, դեղին, կարմիր, կանաչ եւ կապույտ գույների ճիշտ ընկալումը:

17. Հողմապակիների օպտիկական աղավաղումները (էկրանի վրա պրոյեկտված շրջանակի տրամագծի փոփոխությունը) A եւ 1-ին գոտիներում չպետք է գերազանցեն  $\pm 2,5$  մմ (2՝) եւ B գոտում՝  $\pm 7$  մմ (6՝) արժեքները:

Հողմապակու եզրից 100 մմ հեռավորության վրա գտնվող A եւ 1-ին գոտիների բոլոր մասերի համար թույլատրվում է 123 մմ (25՝) երկրորդային պատկերի շեղումը:

Վերգետնյա տրանսպորտային հողմապակիների համար ծայրամասային գոտու եզրից 25 մմ հեռավորության վրա, տրակտորների եւ գյուղատնտեսական մեքենաների հողմապակիների համար՝ 100 մմ հեռավորության վրա օպտիկական աղավաղումները եւ երկրորդային պատկերների շեղումները չեն նորմավորվում: Երկու կեսով հողմապակիների համար հարակից բաժանող կանգնակի նկատմամբ 35 մմ լայնակի շերտում օպտիկական ցուցանիշները չեն նորմավորվում:

18. Ապակիների թույլատրելի արատները պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

#### Բազմաշերտ ապակիներին ներկայացվող պահանջները

19. Բազմաշերտ ապակեթերթերի մեկը մյուսի նկատմամբ թույլատրելի շեղվածությունը եւ սոսնձաթաղանթի էլքը պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

20. Հողմապակիները  $(40\pm 2)$ °C եւ մինուս  $(20\pm 2)$ °C ջերմաստիճաններում պետք է դիմանան  $(227\pm 2)$  գ զանգվածով գնդի հարվածին:

Գնդի անկման բարձրության եւ հարվածի հակադիր ուղղությամբ առանձնացված բեկորների զանգվածը պետք է համապատասխանի 2-րդ աղյուսակով սահմանված նորմերին:

#### Աղյուսակ 2

Ապակու հաստությունը, մմ	Անկման բարձրությունը, մ,   Բեկորների
+0,025	զանգվածը, գ,

	0 ջերմաստիճանում   ոչ ավելի		
	-20 oC	+40 oC	
Մինչև 4,5-ը ներառյալ	8,5	9,0	12
4,5-ից բարձր՝ մինչև 5,5-ը ներառյալ		9,0	10   15
5,5-ից բարձր՝ մինչև 6,5-ը ներառյալ		9,5	11   20
6,5-ից բարձր	10	12	25

Յուրաքանչյուր ջերմաստիճանում փորձարկման ենթարկված 10 նմուշից 8-ը չպետք է բաժանվի առանձին մասերի եւ առնվազն 8 գնդեր չպետք է անցնեն նմուշների միջով: +0,025

21. Հողմապակիները պետք է լինեն կայուն (4 ) մ բարձրությունից, 0

82 մմ-ին մոտ տրամագծով, (2260+/-20) գ զանգվածով գնդի հարվածով ծակատման նկատմամբ: Հարվածից հետո 5 վ-ում ապակու միջով չպետք է անցնի գունդը: +0

22. Հողմապակիները պետք է դիմանան (1,5 ) մ բարձրությունից մանեկենի -0,005

անկման հարվածին: Հարվածի ժամանակ պետք է ձեւավորվեն բազմակի շառավղային եւ եւ շրջանաձեւ ճաքեր: Հարվածի կետից մինչև մոտակա շրջանաձեւ ճաքի հեռավորությունը պետք է լինի 80 մմ-ից ոչ ավելի: Ապակու բեկորները չպետք է առանձնանան սոսնձաթաղանթից: Հարվածի կետի կենտրոնում 60 մմ տրամագծով շրջանակում թույլատրվում է երկու կողմից ճաքեր՝ մեկ կամ մի քանի եւ 4 մմ-ից ոչ ավելի լայնությամբ բեկորների առանձնացում:

Հարվածի կողմից միջանկյալ շերտը 20 սմ2-ից ավելի մակերեսով հատվածամասում չպետք է մերկանա: Թույլատրվում է 35 մմ երկարությամբ միջանկյալ շերտի վրա ճեղքվածքների առաջացումը:

23. Ապակիները, բացի հողմապակիներից, պետք է դիմանան (227+/-2) գ զանգվածով գնդի հարվածին: Գունդը չպետք է անցնի նմուշի միջով: Գնդի անկման բարձրությունը եւ հարվածի հակադիր ուղղությամբ առանձնացված բեկորների զանգվածը պետք է համապատասխանեն 3-րդ աղյուսակով սահմանված արժեքներին:

Մինչև 0,1 մ2 մակերեսը ներառյալ եւ 300 մմ-ից պակաս լայնությամբ ապակիները մեխանիկական ամրության փորձարկումների չեն ենթարկվում:

### Աղյուսակ 3

Ապակու հաստությունը, մմ	Գնդի անկման բարձրությունը Բեկորների	
	մ, +0,025	զանգվածը,
0	գ, ոչ ավելի	
Մինչև 5,5-ը ներառյալ	5,0	
5,5-ից բարձր՝ մինչև 6,5-ը ներառյալ	6,0	15
6,5-ից բարձր	7,0	

+0

24. Ապակիները, բացի հողմապակիներից, պետք է դիմանան (1,5 ) մ  
-0,005

բարձրությունից մանեկենի անկման հարվածին: Հարվածի ժամանակ փորձարկվող նմուշը պետք է ճկվի եւ ճեղքվի՝ առաջացնելով հարվածի կետի շուրջը կենտրոնացված բազմաթիվ ճաքեր: Թույլատրվում է թաղանթի կտրվածք, սակայն մանեկենի գլուխը չպետք է անցնի ապակու միջոցով: Չի թույլատրվում սոսնձաթաղանթից մեծ բեկորների առանձնացումը:

Ճանապարհաշինարարական, գյուղատնտեսական մեքենաների եւ պաշտպանիչ էկրանների համար բազմաշերտ ապակիները մանեկենի հարվածի փորձարկումների չեն ենթարկվում:

25. Ապակիները պետք է լինեն լուսակայուն: Ապակիների ճառագայթումից հետո լուսանցումը պետք է լինի մինչեւ ճառագայթումը դրանց լուսանցման 95%-ից ոչ պակաս եւ բոլոր դեպքերում ավտոտրանսպորտի հողմապակիների համար 75%-ից ոչ պակաս, եւ այլ ապակիների համար՝ 70%-ից ոչ պակաս: Չի թույլատրվում այլ թերությունների առաջացումը:

26. Ապակիները պետք է լինեն խոնավակայուն: Խոնավակայունության փորձարկումներից հետո ապակիների նմուշների վրա չի թույլատրվում բշտիկների առաջացում եւ նմուշների ապակու շերտատում՝ հատված եզրից 10 մմ-ից ավելի եւ հատվածից 15 մմ-ից ավելի հեռավորության վրա:

27. Ապակիները պետք է լինեն ջերմակայուն: Ջերմակայունության փորձարկումներից հետո ապակիների նմուշների վրա չի թույլատրվում բշտիկների առաջացում ու նմուշների չհատված եզրից 14 մմ-ից ավելի կամ հատվածից՝ 25 մմ-ից ավելի եւ փորձարկումների ժամանակ առաջացած ցանկացած ճաքից 10 մմ հեռավորության վրա ապակու շերտատում:

#### Միսած ապակիներին ներկայացվող պահանջները

28. Միսած ապակիները պետք է լինեն մեխանիկակայուն եւ պետք է դիմանան 4-րդ աղյուսակում ներկայացված բարձրություններից (227+/-2) գ զանգվածով պողպատյա գնդի հարվածին:

#### Աղյուսակ 4

Գնդի անկման բարձրությունը, մ, +0,025	Ապակու հաստությունը, մմ
0	
2,0	մինչեւ 3,5-ը ներառյալ
2,5	3,5-ից բարձր՝ մինչեւ 5,5-ը ներառյալ
3,0	5,5-ից բարձր

Փորձարկվող ապակիների 6 նմուշներից առնվազն 5-ը պետք է դիմանա գնդի հարվածին:

Մինչեւ 0,1 մ2 մակերեսը ներառյալ եւ 300 մմ-ից պակաս լայնությամբ ապակիները մեխանիկական ամրության փորձարկումների չեն ենթարկվում:

29. Փորձարկումների ժամանակ ապակիների քայքայման բնույթը որոշող 50x50 մմ չափով ցանկացած քառակուսիներում պետք է լինեն 40-ից ոչ պակաս եւ 400-ից (3 մմ-ից պակաս հաստությամբ ապակիների համար՝ 450) ոչ ավելի բեկորներ:

Չի թույլատրվում 3 սմ<sup>2</sup>-ից ավելի մակերես ունեցող բեկորներ: Թույլատրվում է մի քանի բեկորներ՝ երկարավուն ձեւի, եթե դրանք չունեն սուր ծայրեր եւ պոկվել են ապակու եզրից ստեղծելով 450-ը չգերազանցող անկյուն: Այդ դեպքում երկարությունը չպետք է գերազանցի 75 մմ-ն, եւ 60-75 մմ երկարությամբ բեկորների թիվը չի գերազանցում 5 հատը:

Հարվածի կետի շուրջ 75 մմ շառավղով շրջանակի, ինչպես նաեւ 20 մմ լայնությամբ եզրագծի գոտում քայքայման բնույթը չի նորմավորվում:

#### Ապակիների մակնշումը

30. Յուրաքանչյուր ապակու վրա պետք է մակնշված լինեն հետեւյալ տվյալները՝

ա) արտադրող կազմակերպության անվանումը եւ ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) ապակու տեսակը եւ տիպի պայմանական նշագիրը՝ սահմանված որոշակի տեսակի ապակու ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով,

գ) ապակիները, որոնց լուսաթափանցելիությունը 70%-ից պակաս է, պետք է լրացուցիչ մակնշված լինեն "Y" նշանով,

դ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նշագիրը կամ այդ փաստաթղթով նախատեսված պայմանական նշանը,

ե) ավտոտրանսպորտային միջոցների բազմաշերտ ապակիների համար՝ ապակու արտադրման տարեթիվը եւ ամիսը:

31. Ավտոտրանսպորտային միջոցների հողմապակու համար պետք է նշված լինի ապակու տեսակը: Ապակիների տեսակը եւ նշագիրը պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

32. Արտադրողի եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա կամ որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով կարող են սահմանվել լրացուցիչ տվյալներ (թղթե պիտակների վրա՝ համարը՝ ըստ կատալոգի, ապակու տեսակը եւ այլն):

33. Ապակիների փոխադրական տարայի (փաթեթի) վրա պետք է փակցված լինի պիտակ՝ հետեւյալ բովանդակությամբ՝

ա) արտադրող կազմակերպության անվանումը եւ ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) ապակու տիպի նշագիրը՝ սահմանված որոշակի ապակու ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով,

գ) չափերը եւ ապակու տեսակը,

դ) ապակիների թիվը փաթեթում՝ հատ,

ե) թողարկման թվականը,

զ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նշագիրը կամ այդ փաստաթղթով սահմանված պայմանական նշանը,

է) փաթեթավորման թվականը:

34. Փոխադրման տարաների վրա մակնշումը պետք է կատարվի IX բաժնով սահմանված ցանկով նախատեսված բեռների մակնշման ստանդարտի պահանջներին համապատասխան: Վարվելակարգային նշանները, լրացուցիչ եւ տեղեկատվական ցուցումները պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

Ապակիների փաթեթավորմանը ներկայացվող պահանջները

35. Յուրաքանչյուր ապակի ծածկում են թղթով կամ այնպիսի նյութով, որը չունի քերծելու հատկություն:

36. Կախված ապակիների ձևից եւ չափերից՝ դրանք փոխադրական փաթեթում պետք է դասավորվեն 12 հատից ոչ ավելի: Փոխադրական փաթեթի ձեւը եւ փաթեթավորման համար անհրաժեշտ նյութերը պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

Փաթեթավորումից առաջ բազմաշերտ կորածեւ հողմապակիների եզրաշերտերը պետք է կողային մասերով լինեն սոսնձային թաղանթով եզրավորված:

37. Փոխադրական փաթեթները տեղադրվում են բեռնարկերի մեջ:

Բազմահարկ բեռնարկերով փոխադրվելու դեպքում դրանց մեջ պետք է նախատեսված լինեն հատուկ միջոցներ, որոնց օգնությամբ բացառվեն ապակիների փոխադրական փաթեթների տեղաշարժը:

38. Փոքր քանակությամբ ապակիների փոխադրումը կարելի է իրականացնել փայտյա արկղերով, դրանք լրացուցիչ ամրացնելով փաթեթավորման պողպատե ժապավենով՝ փոխադրման ժամանակ բացառելով ապակիների տեղաշարժը:

39. Ապակիների յուրաքանչյուր փոխադրման տարա կամ բեռնարկը պետք է ունենա ապրանքաուղեկից փաստաթուղթ, որի վրա պետք է նշված լինեն սույն տեխնիկական կանոնակարգի 33-րդ կետով սահմանված տվյալները:

Առեւտրային կազմակերպությունների համար ապակիների արկղերում կամ բեռնարկերում պետք է նախատեսված լինի նաեւ հրահանգ՝ դրանց փաթեթի բացման, ապակիների պահման եւ տեղադրման վերաբերյալ ցուցումներով:

## V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

40. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ապակիների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր

ներկայացուցիչը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի "Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները եւ դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին" N 1170-Ն որոշմամբ սահմանված 1 հ, 2 հ, 3 հ կամ 4 հ հայտարարագրման սխեմայով հավաստված՝ համապատասխանության հայտարարագիր կամ

2 ս, 3 ս, 4 ս, 5 ս կամ 6 ս սերտիֆիկացման սխեմայով հավաստված՝ համապատասխանության սերտիֆիկատ: Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչն ապակիների եւ (կամ) դրանց փոխադրական տարանների ու ապրանքաուղեկից փաստաթղթերի վրա կարող են նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի "Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները եւ կիրառման կարգը հաստատելու մասին" N 1281-Ն որոշմամբ նախատեսված ձևի համապատասխանության նշան:

41. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով ապակիների նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում ներկայացված ստանդարտով սահմանված խմբաքանակից դրանց նմուշների ընտրանքին համապատասխան:

42. Ապակիների նույնականացման գործընթացում ստուգվում են դրանց մակնշման համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթերում տրված տեղեկատվությանը:

43. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնով սահմանված փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտին համապատասխան:

44. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացումն իրականացվել է համապատասխանության հավաստման 2 ս, 3 ս, 4 ս կամ 5 ս սխեմայով:

Համապատասխանության հայտարարագրի եւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ համապատասխանության հավաստման իրականացված սխեմայի՝

2 հ կամ 2 ս սխեմայի դեպքում՝ 12 ամիս,

3 ս սխեմայի դեպքում՝ 24 ամիս,

3 հ, 4 ս կամ 5 ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս,

1 հ, 4 հ կամ 6 ս սխեմայի դեպքում՝ գործողության ժամկետը սահմանվում է՝ հաշվի առնելով ապակիների ծառայության ժամկետները, բայց 6 ամսվանից ոչ պակաս:

45. "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ սերտիֆիկացված ապակիների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետներում:

46. Համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնել կամ դադարեցնել: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման եւ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին եւ գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

## VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

47. Ապակիների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացնել "Չափումների միասնականության ապահովման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:


## VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

48. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ապակիների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## VIII. ՀՈՂՄԱՊԱԿԻՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարդատար ավտոմեքենաների հողմապակիների A եւ B գոտիների որոշումը

49. Ավտոտրանսպորտի հողմապակիների A եւ B գոտիները (1-ին գծապատկեր) որոշվում են տրանսպորտային միջոցում դրանց տեղակայման անկյան դիրքով (V1 եւ V2 կետեր)՝ վարորդի աչքի պայմանական դիրքի համեմատ:



Գծապատկեր 1

V1 եւ V2 կետերը որոշվում են R նստոցի ստուգիչ կետում սկզբնականի կոորդինատների ուղղանկյուն համակարգի համեմատ, որի x եւ z առանցքների ուղղությունը համընկնում է ավտոմեքենայի թափքի նախագծման ժամանակ կիրառվող կոորդինատների համակարգի առանցքների ուղղության հետ:

V1 եւ V2 կետերի կոորդինատները նստոցի թիկնակի 250 թեքության ժամանակ որոշվում են 2-րդ գծապատկերին եւ 5-րդ աղյուսակին համապատասխան:

Աղյուսակ 5

Կետը	Կոորդինատները, մմ		
	x	y	z
V1	68	-5	665
V2	68	-5	589

Նստոցի թիկնակի թեքության 250-ից տարբերվող անկյունների դեպքում V1 եւ V2 կետերի համար անհրաժեշտ է 6-րդ աղյուսակին համապատասխան x եւ z կոորդինատների համեմատ մտցնել ուղղումներ:

Աղյուսակ 6

Նստոցի թիվնակի			Կոորդինատները, մմ			Նստոցի թիվնակի			Կոորդինատները, մմ			Նստոցի թիվնակի			Կոորդինատները, մմ		
թիվնակի			մմ			թիվնակի			մմ			թիվնակի			մմ		
թեքության			թեքության			թեքության			թեքության			թեքության			թեքության		
անկյունը			x   z			անկյունը			x   z			անկյունը			x   z		
5o	-186	28	17o	-71	17	29o	34	-11									
6o	-176	27	18o	-62	15	30o	43	-14									
7o	-167	27	19o	-53	13	31o	51	-17									
8o	-157	26	20o	-44	11	32o	59	-21									
9o	-147	26	21o	-35	9	33o	67	-24									
10o	-137	25	22o	-26	7	34o	76	-28									
11o	-128	24	23o	-17	5	35o	84	-31									
12o	-118	23	24o	-9	2	36o	92	-35									
13o	-109	22	25o	0	0	37o	100	-39									
14o	-99	21	26o	9	-3	38o	107	-43									
15o	-90	20	27o	17	-5	39o	115	-47									
16o	-81	18	28o	56	-8	40o	123	-52									

50. Հողմապակու A եւ B գոտիների դիրքերը որոշվում են 2-րդ գծապատկերին համապատասխան:

Գծապատկեր 2

ԻՐՏԵԿ - գծապատկերը չի բերվում

1) A գոտին որոշվում է ապակու արտաքին մակերևույթի չափերը սահմանափակող չորս հարթությունով՝

ա) V1 եւ V2 կետերով 13o անկյունով դեպի ձախ անցնող P1 ուղղաձիգ հարթությունով,

բ) V1 եւ V2 կետերով 20o անկյունով դեպի աջ անցնող P2 ուղղաձիգ հարթությունով,

գ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց եւ V1 կետով 3o անկյունով դեպի վերեւ անցնող P3 հարթությունով,

դ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց եւ V2 կետով 1o անկյունով դեպի ներքեւ անցնող P4 հարթությունով.

2) B գոտին որոշվում է եզրից ավելի քան 25 մմ հեռավորության վրա եւ արտաքին մակերեւույթի չափերը սահմանափակող չորս հարթությունով՝

ա) V1 եւ V2 կետերով 17օ անկյունով դեպի ձախ անցնող P1 ուղղաձիգ հարթությունով,

բ) V1 եւ V2 կետերով 17օ անկյունով դեպի աջ V1 եւ V2 սիմետրիկ, ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանը համեմատ անցնող P2 ուղղաձիգ հարթությունով,

գ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց եւ V1 կետով 7օ անկյունով դեպի վերեւ անցնող P3 հարթությունով,

դ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց եւ V2 կետով 5օ անկյունով դեպի ներքեւ անցնող P4 հարթությունով:

51. Բեռնատար ավտոմեքենաների, ավտոբուսների, տրակտորների եւ գյուղատնտեսական մեքենաների հողմապակիների 1-ին գոտու որոշումը՝

1) հողմապակիների 1-ին գոտու դիրքը որոշվում է 3-րդ գծապատկերին համապատասխան եւ՝

ա) տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությանը զուգահեռ ուղղաձիգ հարթությունով անցնող՝ վարորդի նստոցի ստուգիչ R կետի վերելում 625 մմ բարձրության վրա գտնվող եւ դեկանիվի առանցքով անցնող O տեսադաշտի կետի հիման վրա,

բ) O տեսադաշտի կետով անցնող եւ տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց հորիզոնական ուղիղ գծի՝ OQ ուղու հիման վրա.

### Գծապատկեր 3

---

ԻՐՏԵԿ - գծապատկերը չի բերվում

2) 1-ին գոտին որոշվում է հողմապակու արտաքին մակերեւույթի չափերը սահմանափակող չորս հարթությունով՝

ա) O կետով եւ տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությունից 15օ անկյունով դեպի ձախ անցնող P1 ուղղաձիգ հարթությունով,

բ) P1-ին սիմետրիկ եւ տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությունից աջ գտնվող P2 ուղղաձիգ հարթությունով,

գ) OQ-ին ուղիղ եւ հորիզոնական հարթության 10օ անկյունով դեպի ներքեւ անցնող P3 հարթությունով,

դ) OQ-ին ուղիղ եւ հորիզոնական հարթության 8օ անկյունով դեպի վերեւ անցնող P4 հարթությունով:

Սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ գծապատկերին համապատասխան՝ հողմապակու

թեքության անկյունը եւ վարորդի նստոցի թիկնակի թեքության անկյունը թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար հողմապակու վերին եզրի միջին մասի համեմատ P (A, B, C) կետի կոորդինատները նշվում են ավտոտրանսպորտի հողմապակիների գծագրերում:

### Գծապատկեր 4

---

ԻՐՏԵԿ - գծապատկերը չի բերվում

Թույլատրվում է տրակտորների եւ գյուղատնտեսական մեքենաների համար 1-ին գոտու դիրքն ընդունել հողմապակու ամբողջ մակերեւույթը՝ բացառությամբ 100 մմ լայնությամբ ծայրամասային գոտուց:

IX. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ  
ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը	Պահանջներ եւ փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
ԳՕՍ 5727 3-րդ եւ 4-րդ բաժին	Ապակիներ անվտանգ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար՝ Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍ 13521	Ապակիներ էլեկտրագնացքների եւ դիզել-գնացքների ուղեորատար վագոնների. Հիմնական չափեր եւ տեխնիկական պահանջներ
ԳՕՍ 14192	Մակնշում բեռների
ԳՕՍ 27902	Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների եւ զյուղատնտեսական մեքենաների համար. Օպտիկական հատկությունների որոշում
ԳՕՍ 27903	Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների եւ զյուղատնտեսական մեքենաների համար. Մեխանիկական հատկությունների որոշում
ԳՕՍ 27904	Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների եւ զյուղատնտեսական մեքենաների համար. Լուսակայունության, ջերմակայունության եւ խոնավակայունության որոշում